

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ւ

Տ. Տ. Գ Ա Ր Ն Գ Ն Ի Ա Ռ Ա Ջ Ն Ո Յ

Վ Ե Հ Ա Փ Ա Ռ Ե Ի Ս Ր Բ Ա Ջ Ն Ա Գ Ո Յ Ն
Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս Ի Ա Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ո Ց



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՊԱՏԳԱՄԸ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԱՌԻԹՈՎ

ՍԷՐ-ՔՐԻՍՏՈՍ

ՍԷՐ- ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆ

ՍԷՐ-ՀԱՅՈՒԹԻՒՆ

«Որ կերպարան Հօր և արարչակից Բանդ. վասն փրկութեան ազգի մարդկան այսօր ի կուսէ ղկերպարանս ծառայի զգեցար մարդասիրապէս. Բո ամենակեցոյց դայրստեամբդ ողորմեա մեզ Աստուած»

«Քրիստո՛ս, Դուն որ Հօր Աստուծոյ պատկերն ես և մասնակից (Անոր) արարչութեան, մարդու Հանգէպ Բու սէրէն մղուած և ողջ մարդկութեան փրկութեան Համար այսօր Ս. Կոյսէն ծառայի կերպարանք զգեցար, Բու ամենակեցոյց գալուստովդ ողորմէ՛ մեզի»:

Աղօթաբոյր այս բառերը քաղուած են Քրիստոսի ծննդեան և աստուածայայտնութեան նուիրուած սրբախօս շարականներէն, որոնց մէջ սքանչելի պատկերացումով կը բացայայտուի թէ ինչպէս Կատարեալը, Սնմեղը, Սմենապօրը, Արարիչը Աստուած Ինք յանկարծ մարդու կերպարանք կը ստանայ, Տէրը ծառայ կը դառնայ ի սէր և ի փրկութիւն մարդկութեան:

Քրիստոսի Մարդեղութեան խորհուրդը ո՛չ բանական

խորհողութեամբ կը հասկցուի և ո՛չ այ գիտական վնասութեամբ կը բացատրուի: Ինչպէ՛ս անտեսանելի և անհասանելի Աստուած մարդու սահմանաւոր բնութիւնը կ'իրացնէ և իր անմերձենալի բարձունքէն կը խոնարհի մինչև Բերդեհէմի խեղճ, աննշան մտորը:

Շարականագիր վարդապետը մեզի կու տայ այս հարցումին պատասխանը, բնականօրէն վայն քաղելով Աւետարանէն, ուր ըսուած է. «Աստուած այնպէս սիրեց աշխարհը՝ որ իր միածին որդին տուաւ, որպէսզի ան որ կը հաւատայ Անոր՝ չկորսուի, այլ ընդունի յաիտենական կեանք: Որովհետև Աստուած իր Որդին դրկեց աշխարհ ո՛չ թէ աշխարհը դատաստանի ենթարկելու, այլ որպէսզի Անով աշխարհը փրկուի» (Թովմ. Գ. 16-17):

«Մարդասիրապէս» կ'ըսէ շարականագիրը, այս բառին մէջ խտացնելով այն գաղափարը, որ մարդ էակի հանդէպ Աստուծոյ սէրն էր որ պատճառ եղաւ Աստուծոյ Որդւոյն մարդեղութեան: Հոգևոր ապրումներու և բանաստեղծական պատկերացումներու գանձարան եղող Շարակնոցին ուրիշ մէկ էջին վրայ կը կարդանք ու կ'երգենք.

«Սէրն ի Սիրոյ զՍէրդ առաքեաց»

(«Որդին Աստուած, Հայր Աստուծմէ

Հոգի Աստուածդ դրկեց»):

Երրորդութեան երեք անձերու միասնական բնութիւնն է Սէրը. «Զի Աստուած Սէր է»:

Ահա գաղտնի բանալին Քրիստոսի մարդեղութեան խորհուրդին: Պարզ ու վճիտ: Ուրիշ խօսք աւելորդ է և անհարկի: Որովհետև տիեզերքի ստեղծագործութեան ոյժը Սէ'րն է: Մարդու կեանքի երջանկութեան աղբիւրը Աէ'րն է: Սէրը՝ որ կեանքով ու գործով կ'արտայայտուի, ծառայութեամբ ու բարիքով կը մարմնանայ և, ի հարկին, խաչով կը կնքուի:

Քրիստոսի կեանքը երկրի վրայ եղաւ այս Սիրոյն ճառագայթող արևանման տիպարը, որ իր առաքեալներուն և իր հիմնած Եկեղեցւոյ սրբակենցաղ սպասաւորներուն միջոցաւ Եկեղեցին կենդանի պահեց բոլոր տեսակի փորձութեանց և հակամարտութեանց դիմաց, ինչպէս անոր հիմնադիրը և գլուխը՝ Քրիստոս Ինք ըսած էր. «Դրումք դժոխոց զնա մի՛ յաղթաճարեցեան» (Մատթ. ԺԶ. 18):

Հայութեան երկհապարամեայ կեանքին մէջ այդ Սէր-

Սատուածորդին՝ մարդացեալ, ապրեցաւ մեր ժողովուրդին հետ Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ մէջէն, սկսեալ Թադէոս և Բարթողիմէոս իր առաքեալներէն, Ս. Գրիգոր Լուսաւորիչէն մինչև մեր օրերը: Եւրջ քսան դարերու մեր ողջ պատմութիւնը անհասկնալի կը դառնայ առանց այդ Եկեղեցւոյ ներգործութեան պատկերացումին: Բայց անցեալի ժառանգութիւնը անցեալի մէջ պարփակուած արժէք չէ: Այդ ժառանգութիւնը կը ճառագայթէ այսօր մեր հայ ժողովուրդի նոր կեանքի պայմաններուն տակ:



Ահա դարձեալ անգամ մը ևս, ուրիշ քրիստոնեայ ազգերու նման, մեր ազգն այ դէմ յանդիման կը գտնուի Քրիստոսի ծննդեան և՛ սատուածայայտութեան տօնին, որ իմ համեստ բացատրութեամբ՝ Սիրոյ Փառատօնն է գերագոյն և անգերապանցելի աստիճանով: Սատուծոյ սիրոյն ներթափանցումն է մեր անձերուն և կեանքերուն մէջ: Այսօր մեր ժողովուրդը տօնական մթնոլորտի մէջ կ'ապրի, ոչ թէ այլևս աշխարհայնացած բարքերու և սովորութիւններու, ուտելիքի, հագնելիքի և նուէրներ տալու ու ստանալու ժողովրդական ասանդութիւններով, այլև, ու մանաւանդ Սատուածորդին Քրիստոսի (Օծեալին, Մարդացեալ Փրկչին) վերածող Սիրոյն զօրութեան ներթափանցումովը իր ազգային կեանքին մէջ: Ս. Ծնունդի այս տօնին սիրտերը կը ճմլուին և կը կակուղնան, ինչպէս կ'ըսէ Ս. Ներսէս Ենորհալին՝

«Մէր անուն Յիսուս,

Սիրով քով ճմլեա՛,

Զսիրտ իմ քարեղէն»:

Եկեղեցին իր աղօթքներով, ծիսական արարողութիւններով, քարոզութիւններով սիրոյ հնձանն է այսօր, ուր սէր-գինին կը պատրաստուի մեր կեանքը երջանկութեամբ լեցնելու համար:

Բոլոր քրիստոնեայ ազգերուն նման մենք ևս կ'անդրադառնանք, որ Եկեղեցւոյ հիմնադիրին՝ Քրիստոսի ծննդեան 1999-րդ տարեդարձն է որ կը տօնենք: Յաջորդ տարի 2000-րդ տարեդարձն է: Քրիստոնեայ Եկեղեցիներ և ազգեր կը պատրաստուին ամէն տեղ բացառիկ շուքով նշելու Եկեղեցւոյ շարունակուող և զարգացող պատմութեան այս նշանակալից հանգրուանը: Բնականօրէն մեր Եկեղեցին ալ պիտի բերէ իր բաժինը

ընդհանուր քրիստոնէական տօնախմբութեան: Տօնախմբութիւն՝ որ փառքի պգացումէն աւելի պարտքի՝ պգացումն է՝ որ պիտի մշակէ և պօրացնէ ողջ քրիստոնէայ աշխարհին համար:

Մենք՝ հայ ժողովուրդի պաւակներս, բացի 2000-ամեակէն, կը պատրաստուինք արժանաւայել կերպով նշելու մեր Եկեղեցւոյ պաշտօնական հիմնադրութեան կամ քրիստոնէութեան որպէս ազգային կրօն պետականօրէն ճանաչման 1700-ամեակը:

Միտելիք.

Ամէն տեղ, և ամէն յարմար առիթով, ու հպարտութեամբ, մենք կը յայտարարենք ամբողջ աշխարհին, որ պետականօրէն ճանչցուած առաջին քրիստոնէայ ազգն ենք: Ինչպէ՞ս պիտի արժեցնենք այդ «առաջնութիւնը»: Հռետորական խօսքերով, ինքնագովական փառասիրութեամբ: Ո՛չ: Անցեալի պանծացումը չի՝ նշանակէր անցեալը կուռքի վերածել և անոր խունկ ծխել: Եթէ շարունակէք անցեալի փառաբանանքը այն աստիճան, որ անով լեցուիինք, յղիանանք և սիրամարգի փետուրներ կապենք, մենք անցեալին դաւածանած կ'ըլլանք: Մի՛ մոռնաք, անցեալը անցած չէ...: Ան կը ներգործէ մեր մէջ որպէս ներշնչման աղբիւր նոր արարումներու, նոր ստեղծագործութիւններու համար: Կեանքը կը շարունակուի: Եւ մենք այսօր, 20-րդ դարու այս աւարտին, շաղկաւորներն ենք այդ կեանքին: Օղակ մըն ենք այն շղթային վրայ, որ մեր կեանքի գնացքն է՝ դարերու վրայ տարածուած և դէպի անսահմանելի ապագայ նկրտող:

Ի՞նչ պէտք է ընենք:

Նորոգեալ կեանքով ապգ ենք: Ահա ունեցանք մեր սեփական ապատ ու անկախ պետութիւնը: Ապատութեան այս պայմաններուն տակ կարող ենք մեր ապատ կամքով որոշել, թէ ինչ պէտք է ընենք: Այլևս ուրիշը դուրսէն պիտի չթելադրէ կամ պիտի չպարտադրէ մեր ընելիքը: Լուրջ, ճակատագրական փորձաքարի և մարտահրաւերի դիմաց կը գտնուիինք:

Ես չեմ տեսներ ուրիշ ճամբայ, բայց միայն այն, որ 2000-ամեակի և 1700-ամեակի տարիները կը տանին դէպի ազգային բարեկարգութիւն, բարենորոգում, ինքնապօրացում և յառաջագնաց վարձացում՝ ի ժառայութիւն Սատուծոյ և մարդկութեան: Անհրաժեշտ կը գտնեմ, որ այս երեք տարիները՝ 1999-ը, 2000-ը և 2001-ը, մեր ազգի պաւակներուն համար դառնան ինքնաքննութեան, ինքնատեսութեան, ինքնասրբագրման և ինքնաբի-

րեղացման տարիներ: Դառնան իսկական բարենորոգման, պիտի ըսէի՝ պայծառակերպութեան տարիներ:

1700-ամեակի տօնակատարութեան համար թէ՛ Եկեղեցւոյ և թէ՛ հայրենի պետութեան կողմէ ծրագրուած և արդէն իսկ իրագործուող գործունէութիւններու զազաթնացումը պիտի ըլլայ կառուցումը և օծումը մեր հայրենիքի քաղաքամայր Երևանի մէջ նոր Եկեղեցիի մը, Մայր Եկեղեցիի մը, մեր հաւատոյ Հօր՝ Ս. Գրիգոր Լուսաորչի անունով, որ պիտի ըլլայ մեր ժողովուրդի քրիստոնէական հաւատքին կենդանութեան շքեղ փաստը և այդ հաւատքի առաւել ևս մշակման և հպօրացման օճախը՝ ի սպաս մեր ժողովուրդի հոգևոր կարիքներուն: Արդէն իսկ կը նորոգուին մեր հայրերու հաւատքին պերճախօս վկայութիւնը եղող հին Եկեղեցիները, որոնք ընդհանրապէս արուեստի կոթողներ են՝ այնքան սիրելի բոլորիս համար: Բայց անցեալի կառուցներու վերանորոգումը բաւարար չէ մեր ժողովուրդի նոր կեանքի պայմաններուն համար: Երևակայեցէք որ Երևան մայրաքաղաքին մէջ, ուր մէկ միլիոնէ աւելի հայեր կ'ապրին, չունինք մէկ հատ Եկեղեցի՝ որ կարենայ 150 անձէ աւելի հաւատացեալներու բազմութիւն ընդունիլ: Եթէ պիտի արժևորենք 1700-ամեակը ապագայի յառաջդիմութեան հայեցակէտով, և ոչ թէ անցեալին պաշտամունք ընծայելու հոգեբանութեամբ, այն ատեն եկէք կառուցենք նոր Մայր Եկեղեցի՝ Ս. Գրիգոր-Լուսաորչի տեսիլքին համաձայն.

«Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ

Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս

ի Հայաստան աշխարհի»:

Եւ որպէսպի կարենանք մեր ազգի անունին ու վարկին համապատասխան արժանապատուութեամբ տօնել Քրիստոսի ծննդեան 2000-ամեակը և հայ ազգի քրիստոնէական ծննդեան 1700-ամեակը, եկէք հետևինք Մարդացեալ Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի բացած և գծած ճանապարհին, որ Սիրոյ ճանապարհն է: Եթէ Մերը՝ Ինքը Ստուած, մարմնացաւ Քրիստոսով և ծառայեց ու խայռեցաւ մարդկութեան փրկութեան համար, եթէ մենք քրիստոնէայ ազգ ենք բառին իրաւ և ամբողջական իմաստով, և ոչ թէ սոսկ պատմական տուեալներով և ձևական, անուանական եղանակով, եթէ հաւատարիմ ենք մեր ազգի 1700-ամեայ պատմութեան ոգիին և ուղիին, մեր հայրերու սուրբ աւան-

դուրեան, եթէ նայիլ գիտենք դէպի հայոց ապագան, ուրիշ ճանապարհ չկայ մեզի համար, բայց միայն Սիրոյ ճանապարհը. Բրիտանի ճանապարհը, որուն մէջէն եթէ քալենք, իրարմով զօրացած կ'ըլլանք և զօրացուցած կ'ըլլանք մեր ազգը իր նոր հանրապետութեամբ և ամբողջ ժողովուրդով ի Հայաստան, յԱրցախ և ի սփիւռս աշխարհի: Մէկ կողմ շարտենք նեղմիտ, մասնակի, կողմնակցական, խմբակցային նկատումները և շահերը և Սիրոյ կապով մեր սիրտերը և ձեռքերը իրար միացուցած՝ քալենք ճշմարտօրէն որպէս մէկ ազգ և մէկ Եկեղեցի, ամբողջական և միասնական:



Հայոց Ազգային Բերդեհէմէն՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն, Ս. Ծննդեան տօնին առիթով կ'ողջունենք հայ ժողովուրդը, մեր հայրենի պետութեան վսեմաշուք Նախագահը, Ազգային Ժողովի և Կառավարութեան անդամները, մեր արիաշունչ բանակը և հանրային ծառայութեան նուիրուած կրթական, գիտական, արուեստի և բարեգործական հաստատութիւններն ու կազմակերպութիւնները՝ մաղթելով, որ վերստին պետականացած մեր ազգը ապրի Սիրոյ զօրութեամբ և յառաջդիմութեան տեսլականով:

Կ'ողջունենք մեր Եկեղեցոյ Նուիրապետական Աթոռները՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, Երուսաղէմի և Կ. Պոլսոյ Պատրիարքական Աթոռները իրենց Գահակալներով, Միաբանութիւններով, հոգևորական և աշխարհական սպասաւորներու դասերով: Կ'ողջունենք մեր բոլոր Թեմերը իրենց Առաջնորդներով և հաւատացեալ ժողովուրդով ի չորս ծագս աշխարհի:

Թող Սէր - Աստուածը Իր մարդեղութեամբ այսօր դառնայ Սէր - Մարդկութիւն և Սէր - Հայութիւն, ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ